

Մրցույթի հայտարարություն

ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի N 13 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի N 13 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Կապանի N 13 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում

2021 թվականի մարտի 17-ից մինչև ապրիլի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9⁰⁰-ից մինչև ժամը 15³⁰-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի ապրիլի 20-ին՝ ժամը 14⁰⁰-ին, ՀՀ Սյունիքի մարզի <<Կապանի N 13 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում

Հասցե՝ Ք.Կապան Ձորք թաղամաս թիվ 3

Տեղեկությունների համար դիմել՝ 093262602, 077053238

Էլ. հասցե՝ kapan13@schools.am